ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-363-31.08.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է
2	ՀՀ կառավարություն	Հոդված 1 2.2-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 2.2-րդ մասով առաջարկվող պարտապանի հաշիվները սպասարկող բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից արգելանք դնելու ժամկետների վերաբերյալ կարգավորումները կիրառելի են նաև օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված՝ պարտապանի արտարժույթի վրա բռնագանձում տարածելու դեպքի համար: Խնդրի ամբողջական լուծման նպատակով առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել նաև օրենքի 47-րդ հոդվածում:	Ընդունվել է
3	ՀՀ կառավարություն	Հոդված 1 2.3-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 2.3-րդ մասով սահմանված է, որ հարկադիր կատարողն է որոշում, թե որ հաշիվն է անհրաժեշտ պահել արգելանքի տակ, որը՝ ոչ: Կարծում ենք հաշվի ընտրության հնարավորությունը	Ընդունվել է

			պետք է թողնել պարտապանին: Հարկ է նկատի ունենալ նաև, որ հնարավոր են դեպքեր, երբ պարտապանը միևնույն բանկում ունի միաժամանակ դրամային և արժութային հաշիվներ կամ ավանդներ: Այս դեպքում նախագծում կարգավորման կարիք ունի նաև հաճախորդի միջոցների նկատմամբ բանկի կողմից արգելադրում իրականացնելու հաջորդականությունը:	
4	ՀՀ կառավարություն	Հոդված 1 2.4-րդ մաս	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով լրացվող 2.4-րդ մասով նախատեսված արգելանքը մասնակի հանելու դեպքը կարգավորել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով նախատեսված արգելանքից հանելու հիմքերի մեջ:	Ընդունվել է
5	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Քննարկման կարիք ունի նաև օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը, քանի որ ամբողջ ծավալով օրենքի կիրառումը պահանջում է տեխնիկածրագրային փոփոխությունների իրականացում:	Ընդունվել է